

ՄՆԱՅԵԱԼ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, ԷՋ 320.

Փիւնիկ թռչունը, որ հին եգիպտացւոց առասպելեալ աւանդութեանը նայելով, արծուի չափ մեծութեամբ ու գեղեցիկ գոյներով թռչուն մի էր: Կըսէին թէ աշխարհիս մէջ մէկ հաս է միայն, ու երբ կիմանայ թէ մահը մօտեցեր է, անուշահոտ բոյսերով բոյն մը կշինէ արեւուն ճառագայթներուն մէջ, եւ թեւերովը զարնելով կըռնկցընէ ու ինքզինքը կայրէ: Ոսկորներուն ծուծէն որդ մը կծնի, եւ անկից նոր փիւնիկ կձեւանայ. նորա առաջին գործը կլինի՝ իւր հօրը թաղումը կատարել. կառնու զմուռը, հակթի ձեւով կըշաւղէ, կփօրէ, հօրը զմուսած մարմինը մէջը կգնէ, ու կտանի Հեղիուպօլսոյ կամ Արեգ քաղաքի տաճարը: Կըսէին թէ փիւնիկը Արաբիոյ մէջ կծնի, եւ մինչեւ 5 կամ 600 տարի կապրի:

Ի ՆՈՅՏԵՄԲԵՐԻ, ԷՋ 352.

Չանկապանի ասպետութեան կարգը, զոր հաստատեց Անգղիոյ եգուարդ Գ թագաւորը 1549-ին: Կըսեն թէ Սալիզպրիի կոմսուհւոյն Չանկապանը (գուլպայի կապը) պարահանդիսի մէջ վար կընկնի, եւ թագաւորը զայն կվերցընէ. եւ երբ պալատականները թագաւորին այն մտադրութեանը վրայ կծիծաղին, նա իւր գործը արդարացընելու համար կըսէ. «Վայ չարախոհին». կամ գաղղիարէն «Honni soit qui mal y pense». այսինքն «Ծուռ մտքի տանողը ծաղր ըլլայ»: Յետոյ երգուընցաւ որ այն Չանկապանը ծաղր ընողը երջանիկ պիտի համարի ինքզինքը՝ եթէ ունենայ զայն: Քիչ ժամանակէն ասպետական կարգ մը հաստատեց, որ ըսուեցաւ Կարգ Չանկապանի (ordre de la jarretière), որոյ գլուխը Անգղիոյ թագաւորը կամ թագուհին է. միայն 26 անգամ ունի, եւ ցանկալի կհամարուի չունեցող մեծամեծաց: Ասպետները ուրիշ նշաններէ զատ՝ կապոյտ Չանկապան մը կկապեն իրենց ձախ սրունքին վրայ, իսկ թագուհին՝ թեւը:

Այս տարուան Օրացուցին Դեկտեմբերի Հանելուկն է ՕՐԱՅՈՅՅ:

